

Հայկազուն Ս. Ալվրցյան  
*Բանաս. գիյր. թեկնասծու*

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԳՐ. ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՅԱՐՈՒԹԵԱՆ» ՏԱՂԻ\*

**Բանալի բառեր** – Գր. Նարեկացի, Գանձարան, Հիսուս Քրիստոս, տաղ, այլաբանություն, հոգևոր խորհուրդ, խորհրդաբանություն, խորհրդանշան, մեկնություն, հարություն, նշանակ:

Գր. Նարեկացու «Յարութեան» տաղը («Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց» սկսվածքով) միակն է բանաստեղծի տաղերից, որը հեղինակը չի ընդգրկել իր Գանձատետրում, հետագայում ևս այն չի ներառվել Գանձարանի մեջ:

Գանձարանի հիմնադիրն ու կազմողը Նարեկացին է, և այն փաստը, որ նրա բոլոր գանձերը, տաղերը և տաղային միավորները (փոխեր, մեղեդիներ) ընդգրկված են Գանձարանում, վկայում է այն մասին, որ հեղինակը դրանք ստեղծել է հատուկ ծրագրով: Ուստի հարց է ծագում՝ «Տաղ յարութեան»-ը ինչու՞ ո՛չ հեղինակի, ո՛չ էլ հաջորդների կողմից չի ընդգրկված Գանձարանում:

Այս հարցը կարևոր է այն առումով, որ ուղղակիորեն առնչվում է տաղի խորհրդական բովանդակության հետ: Թեև Նարեկացու բոլոր տաղերն ու տաղային միավորներն անխտիր ունեն խորհրդական բովանդակություն, սակայն հետազոտողներն առավելաբար կենտրոնացել են այս տաղի այլաբանական բովանդակության վրա և փորձել այն մեկնաբանել: Պատճառն ակնհայտ է. սա Նարեկացու միակ տաղն է, որի խորհուրդը հասկանալուն «նպաստող» «հեղինակային» բացահայտ միջամտություն կա:

«Նպաստող» և «հեղինակային» բառերը չակերտված են, քանզի, ինչպես կհամոզվենք ստորև, այդ միջամտությունը ոչ հեղինակային է, ոչ էլ նպաստող. ավելին՝ այն ապակողմնորոշող է: Ա. Մուշեղյանը «Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» նոր մեկնությունը» հոդվածում հիմք է ընդունում տաղի այն տարբերակը, որը «տարբեր ձեռագրերի հիման

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 31.10.2014:

վրա փորձել է վերականգնել» Ասատուր Մնացականյանը՝ «Գևորգ Ար-  
գարյանի մասնակի լրացումներով»<sup>1</sup>: Ահա այն.

### ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ա

Փայտը Բրիստոսի ամենագոր յարութեան:  
Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց.  
Եւ ի վերայ նորա աթոռք են կարգեալ,  
Եւ ի վերայ նորա՝ գահոյք ոսկեղէնք,  
Եւ ի վերայ նորա՝ բեհեզք ծիրանիք,  
Եւ ի վերայ նորա՝ Որդի արքայի,  
Եւ յաջմէ նորա՝ վեցթևեան սերովբէքն,  
Յահեկէ նորա՝ բազմաչեայ քերովբէքն,  
Առաջի նորա՝ մանկունք գեղեցիկ,  
Ի գիրկս նոցա՝ խաչն տէրունական,  
Ի ձեռին նոցա՝ սաղմոսարան և քնար,  
Որք երգէին գերգս՝ ասելով.  
–Փայտը Բրիստոսի ամենագոր յարութեան:

Բ

Ածեալ են, ածեալ,  
Ջսայիկն ածեալ են, կացուցեալ.  
Ի Մասեաց յաջ կողմանէն  
Ջսայիկն ածեալ են, կացուցեալ.  
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,  
Եւ ահա չխաղայր անին այն:

Եթէ հարիւր բարդ խոլրձան, վեց կորընկան,  
Մին մանուշակ՝ խրձադիզեալ  
(Ի Մասեաց յաջ կողմանէն)  
Ջսայիկն ածեալ են, կացուցեալ.  
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,  
Եւ ահա չխաղայր անին այն:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,  
Եւ սամոտիքն՝ ապրիշիմի,  
Փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ,  
Եւ խարազան՝ փնջեալ ծաղիկ.  
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,  
Եւ ահա չխաղայր անին այն:

Եթէ եզիւք են սաթ ու սպիտակ,  
Ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) փարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հասարակ

1 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» նոր մեկնությունը, «Բրիստոնյա Հայաստան», 2003, N 22 (162):

եղջերն ամէն խաչանման,  
Եւ մագն ամէն՝ հոյլ մարգարիտ.  
Եւ ահա չարժէր սայլիկն այն,  
Եւ ահա չխաղայր անին այն:  
Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,  
Ուռամիջակ, հաստաբագուկ,  
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.  
Նա ձայն ածէր եզնամուլին,  
Կանչին առնէր աթոռակին.  
Դարձեալ խաղայր եզնամուլըն,  
Խաղայր, ցնծայ աթոռակըն.

Եւ ահա շարժէր սայլիկն այն,  
Եւ ահա խաղայր անին այն:  
Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին,  
Այսօր անուշահօտ բուրմամբ ընթանայր.  
Եւ ահա շարժէր՝ սայլիկն այն,  
Եւ ահա խաղայր անին այն:

Գ  
Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ,  
Ի Մասեաց յաջ կողմանէն  
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ.  
Եւ ճորնչալով գայր, մտանէր յերուսաղէմ.  
Եւ որդիք նոր Սիովնի էլին ընդառաջ,  
Որք երգէին գերգս ասելով.  
–Փառքք Քրիստոսի ամենագօր յարութեան,  
Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ  
Եւ վերստին նորոգմամբ  
Յախտենական կենացն եղաք ժառանգորդք:  
Փառքք Քրիստոսի ամենագօր յարութեան:

Այս տարբերակում կատարված ճշտումները նպաստում են իմաստա-  
յին որոշ էական աղավաղումներ վերացնելուն, ինչպէս՝ «Դարձեալ խա-  
ղայր եզնամուլ/ն, Խաղայր, ցնծայր աթոռակ/ն» տարբերակը՝ փոխանակ  
«Դարձեալ խաղայր եզնամուլ/ն, Խաղայր, ցնծայ աթոռակըն» ձիշտ և  
իմաստ արտահայտող տարբերակի:

Սակայն այստեղ պետք է կատարել մեկ ճշտում. ներկայացվող տար-  
բերակի երրորդ տողը («Եւ ի վերայ նորա աթոռք են կարգեալ») պետք է  
լինի «Եւ ի վերայ նորա աթոռ ոսկեղեն», իսկ չորրորդը չպետք է լինի:  
Տաղի վերջին պատկերներից մեկում ճորտը դիմում է աթոռակին և ոչ թե  
աթոռներին.

Նա ձայն ածէր եզնամուլին,  
Կանչին առնէր աթոռակին.

Աթոռը, ինչպես կտեսնենք համապատասխան տեղում, Հիսուս Քրիստոսի իշխանության նշանակն է, որն ինքնին նույն գահն է: Ուրեմն՝ գահույքն ավելորդ է, քանզի նույն իմաստի կրկնությունն է, այն էլ՝ հոգնակի թվով: Այն հետագա հավելում է՝ ստեղծված տարբեր ձեռագրերի մեջ աթոռը «գահոյքով» փոխարինելու հետևանքով:

Ա. Մուշեղյանն իր մեկնության մեջ թեև կատարում է որոշ հետաքրքիր դիտարկումներ, սակայն, ըստ իս, հեռու է ամբողջական մեկնությունից: Բայց նրա հոդվածն արժեքավոր է այն տեսակետից, որ հեղինակը հասկացել է կարևորագույնը. տաղի՝ ստորև ներկայացվող հատվածը Գր. Նարեկացու գրչին չի պատկանում, ուստիև մեկնության մեջ դրանք հաշվի չի առնում:

**Սայլն՝ ի Սինեայ  
Երկրորդ օրէնքն էր Մովսէսի.  
Եւ այն հարիւր բարդ խոլրձանն՝  
Այն նահապետքն են՝ մարգարէք.  
Եւ այն վեց բարդ կորնկանն՝  
Վեցօրեայ գործքն Աստուծոյ.  
Եւ այն մին մանուշակ՝  
Միաւորեալ Երորդութիւնն.  
Եւ այն մանուկ խարտիշագեղն՝  
Այն Յովհաննէսն էր Մկրտիչն.  
Եւ այն չորս կուրծն սայլին՝  
Աւետարանն էր Քրիստոսի:**

Հետազոտողների և մեկնիչների համար ուղեցույց և գայթակղության քար հանդիսացած այս հատվածն իսկապես ապակողմնորոշող դեր է ունեցել, և ձիշտ է նկատել Ա. Մուշեղյանը, որ «Այդ 12 տող մեկնությունը՝ սկսած «Սայլն ի Սինեայ» տողից մինչև «Ավետարանն էր Քրիստոսի» տողը, Նարեկացու տաղին անհարազատ հետագա հավելում պետք է համարել: Մեր այս եզրակացությունը՝ հիմնված մեկնության հեղինակի «վերլուծումների» վրա, այնուհետև հաստատվեց նաև ձեռագրական աղբյուրներով. «Յարութեան տաղի» 12 գրչագրերից ութը (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 8655 (թ. 33–35ա), 7694 (թ. 1բ–3ա և 3ա–32բ), 4466 (թ. 17բ, 18ա), 5066 (թ. 2բ), 7672 (թ. 14աբ), 3637 (թ. 720բ–721ա), 3263 (թ. 70աբ) չունեն այդ 12 տող մեկնությունը, որ բացահայտ վկայում է հետսամուտ ընդմիջարկման մասին»<sup>2</sup>:

Գրականագետը նաև ձիշտ է նկատել, որ Նարեկացին «... մեծ ու փոքր քերթվածքներում, իր խորհրդապաշտական այլաբանությունները չի բացահայտում, այլապես դրանք անիմաստ կլինեին, ձիշտ այնպես, ինչպես Գրիգոր Մագիստրոսը չի մեկնում իր խրթնաբանությունները»<sup>3</sup>:

Պետք է նշել, որ ոչ միայն Գր. Նարեկացին, այլև որևէ հեղինակ չի մեկնում իր տաղերի խորհրդական բովանդակությունը: Թերևս բացա-

2 Անդ., N (23 (163))  
3 Անդ.:

ռություն պետք է համարել մեկ-երկու հոգևոր խորհրդանշանի (ոչ ամբողջական տաղի) անուղղակի մեկնության մեկ դեպք Ներսես Շնորհալու («Կայծ եւ տպագիտն նորն Ահարոնի»)⁴ և մեկ-երկու դեպք էլ Գանձարանի հեղինակների ստեղծագործություններում («Ո՛վ ողկոյզաբեր ճըմկեալ ողկոյզդ, որ ի խաչին»)⁵:

Սակայն սրանք եզակի խախտումներ են խորհրդական խոսքի հիմնական սկզբունքի, որը Գր. Նարեկացին «Երգ երգոց»-ի մեկնության մեջ սահմանում է այսպես. «Զի որպէս ծնողք տղայոց՝ զպատուական իրս ի բարետեսակ ամանի ծածկեն, զի նոցա արտաքոյ տեսեալն ցանկալի թուին քան զոր ի ներքս եղեալ գանձն, զի այնու հորդորեսցին և զգուշութեան պահպանութեան որ ի ներքս»⁶: Ուրեմն՝ «ի ներքս եղեալ գանձն», այսինքն՝ խորհրդական խոսքի բուն խորհուրդը զգուշությամբ պահպանելու գաղտնիքի գիտակը չէր կարող մեկնել իր ամենախորհրդական տաղերից մեկի խորհուրդը:

Ի դեպ՝ նշենք, որ հայտնի է հեղինակների կողմից հոգևոր տաղի այլաբանության մեկնության ընդամենը երկու դեպք: Ընդ որում՝ երկուսն էլ գանձարանային տաղեր չեն և վերաբերում են ավելի ուշ ժամանակաշրջանի: Առաջինը 14-րդ դարի բանաստեղծ Կոստանդին Երզնկացին էր, որ ստիպված էր մեկնել իր «Բանք վարդի օրինակաւ գՔրիստոս պատմէ» այլաբանական տաղի հոգևոր խորհուրդը, որովհետև ժամանակակիցներից շատերն այն ընկալում էին աշխարհիկ իմաստով: Այդ նպատակով նա գրել է մեկ այլ տաղ («Մեկնութիւն վարդին համառօտ: Վասն անգիտաց շինեցի, զի կարծէին եթէ մարմնաւորաց էր բանք վարդիս. ես վասն այն գրեցի»)⁷, որի մեջ այլաբանությունը չհասկացողներին համարում է **«անգէտ»**:

Կ. Երզնկացուց մեկ դար անց, հավանաբար նման մեկ այլ առիթով, Ա. Բաղիշեցին ևս մեկնում է իր տաղի հոգևոր այլաբանությունը՝ դարձյալ պարզաբանելով վարդի և բլբուլի խորհրդանշանները⁸:

Փորձենք ի մի բերել «Յարութեան» տաղի այլաբանության վերաբերյալ տարբեր հեղինակների հայտնած հիմնական տեսակետները, որոնք առավելաբար ազդվել կամ ուղղորդվել են վերոնշյալ 12 տողանոց մեկնաբանական հատվածով:

Նախ՝ անդրադառնանք Մ. Աբեղյանի մեկնությանը: Պետք է նշել, որ Մ. Աբեղյանի տեսակետը, որոշ հավելումներով կամ վերապահումներով, կրկնել են շատերը: Մ. Աբեղյանի համառոտ մեկնությունն ունի երեք առանցքային ելակետ.

ա. Տաղն այլաբանություն է, որի գաղափարը մթագնել է. «Ավելի գեղեցիկ է նրա «Յարութեան տաղը» սայլի պատկերով, որ մի այլաբանութիւն է և որի մեկնութիւնը հէնց ինքը հեղինակը յօրինել է: Առանց այդ մեկնութեան՝ այդ երգը գրեթէ լոկ նկարագիր է մի սայլի, միայն այլաբանութեան պատճառով, գուցէ և աղաւաղուած լինելով, յօրինուածքի գա-

4 Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, Աշխատասիրությամբ Արմինե Քոչկերյանի, Եր., 1987, էջ 21:

5 Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Գանձարան, Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 169:

6 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 273:

7 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխ. Արմենուհի Սրապյանի, Եր., 1962, էջ 145:

8 Տես Առաքել Բաղիշեցի, աշխատասիրությամբ Արշալույս Ղազինյանի, Եր., 1971, էջ 221:

ղափարը մթնած է»:

բ. Նա Մասիսը նույնացնում է Սինա լեռան հետ. «Այստեղ տեսնում ենք Մասիսից (Սինայից) իջնող մի արքայական սայլ»:

գ. Սայլի գնացքը համեմատում է «թագավորական հանդիսավոր գնացքի» հետ. «Անպայման այսպիսի գնացքներ Արծրունեաց թագաւորների՝ տեսել է Նարեկացին և հէնց այդ գրի առել»<sup>9</sup>:

Մ. Մկրյանը փորձում է զանց առնել տաղի հոգևոր այլաբանությունը.

ա. Տաղը «ժողովրդական բանահյուսությունից վերցված մի լեզենդ է, այդ կասկած չի կարող հարուցել»: Սակայն որևէ ապացույց չի բերում:

բ. Տաղում պատկերված սայլը նույնացնում է «մի սովորական գյուղական սայլի» հետ, «... միայն թե այդ սայլի սամիները արծաթի են, լուծը՝ ոսկի, իսկ սամոտիքը՝ մետաքսից»: Հարց է ծագում՝ այդ դեպքում պատկերվող և սովորական սայլը ինչո՞վ են նույնը:

գ. Ճորտին համարում է «սայլապան», «մի սովորական ճորտ գյուղացի»<sup>10</sup>:

Ա. Մխիթարյանը սայլի և սայլի վրա եղածների նկարագիրը կապում է «Աղթամարի պալատի պատկերներից մեկի բովանդակության հետ» և եզրակացնում, որ այն նման է.

ա. «Գագիկի թագադրության հանդեսին» (խոսքը Գագիկ Արծրունու մասին է):

բ. Եւ ապա՝ «Մեր առաջ պարզ պատկերացվում է գյուղական սայլն իր հոյակապ կերտվածքով և մանրամասնությամբ»:

գ. Նշելով այլաբանության առկայությունը՝ ավելացնում է. «Սա զուտ կրոնական մտահղացում չէ, այլ արտահայտված է նոր կյանքի զարթոնքի իդեալը, հայրենիքի ապագայի հույսը, նրա հարությունը»<sup>11</sup>:

Գևորգ Աբգարյանը համամիտ է Ա. Մխիթարյանի հետ, որ Քրիստոսի հարության գաղափարի մեջ արտահայտված է «հայրենիքի ապագա հույսը, նրա հարությունը»<sup>12</sup>:

Արտասովոր սայլի առեղծվածի քննությունը Ա. Մնացականյանին հանգեցրել է այն եզրակացությանը, որ «... այստեղ գործ ունենք աստվածաշնչային և առասպելական սայլի գաղափարի հետ»<sup>13</sup>, որը նկարագրված է Հին Կտակարանում:

Թերևս առավել ուշագրավ է Ա. Մուշեղյանի մեկնությունը, որին կանդորադառնանք մեր մեկնության փորձին զուգահեռ:

Տաղի մեկնության համար հիմնական նախապայման է աստվածաշնչյան խորհրդական խոսքի, պատկերների և խորհրդանշանների մեկնությունը, որը նախորդ գրեթե բոլոր մեկնության փորձերի ժամանակ ուղղակի բացակայում է կամ ընկալվել է բառացի կերպով, ինչն այլաբանական խոսքի մեկնության մեջ պարզապես անպտուղ աշխատանք է: Պետք է

9 **Արեղեան Մ.**, Հայոց հին գրականութեան պատմություն, գիրք առաջին, Անթիլիաս, 2004, էջ 598-599:

10 **Մկրյան Մ.**, Գրիգոր Նարեկացի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1968, էջ 154-155:

11 **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր, 1957, էջ 26-27:

12 **Գևորգ Աբգարյան**, Վերածնություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», Էջմիածին, 1974, N 1, էջ 42-48 և N 2, էջ 40-48

13 «Էջմիածին», 1975, N 10, էջ 42:

հաշվի առնել, որ Գր. Նարեկացու բոլոր տաղերն անխտիր հոգևոր թեմաներով գրված այլաբանություններ են, հաճախ՝ այնքան անթափանց, որ առանց սուրբգրային մեկնությունների և հատկապես Գր. Նարեկացու «Մեկնութիւն Երգ երգոցի» աշխատությանը դիմելու՝ ուղղակի անհնար է դառնում որևէ տաղի խորհրդաբանությունն ամբողջությամբ հասկանալու փորձն անգամ:

«Յարութեան» տաղի մեկնության ժամանակ, սակայն, լուրջ դժվարություններ են ի հայտ գալիս նույնիսկ «Մեկնության» առկայության դեպքում, քանզի այս տաղի բազմաթիվ խորհրդանշաններ ուղղակի Նարեկացու կողմից չեն մեկնվում, որովհետև չեն գործածվել ոչ միայն «Երգ երգոցում», այլև Աստվածաշնչում ընդհանրապես (խոլորձ, կորնգան, մանուշակ, Մասիս և այլն):

Տաղի՝ այլաբանորեն արտահայտված խորհրդական բովանդակությունը հասկանալու համար բնականաբար պետք է պարզել խորհրդանշանների իմաստները: Այդ խորհրդանշաններն են՝ **սայլ, Մասիս, աթոռ, բեհեզ ծիրանի, հարիւր բարդ խոլորձան, վեց կորընգան, մին մանուշակ՝ խրձաղիզեալ, եզինք սաթ ու սպիտակ, եղջերն խաչանման, մագն հոյլ մարգարիտ, ճորտն, Երուսաղէմ, որդիք նոր Սիովի:**

Նախ պետք է պարզել, թե սայլը, Մասիսը և Հիսուս Քրիստոսը (Որդի արքայի) ի՞նչ բովանդակային աղերսներ ունեն, քանզի տաղի գրեթե բոլոր մեկնիչներն այս հարցում է, որ հակասություններ են տեսնում, կամ երբ փորձում են աղերսներ տեսնել, կատարում են անհամոզիչ եզրակացություններ:

Ա. Մնացականյանը ճիշտ է նկատել, որ սայլի գաղափարը բխում է Աստծո տապանակը Կարիաթարիմ քաղաքից Երուսաղէմ փոխադրող սայլից. «Մասնագետներին ցարդ չի հաջողվել պարզել այն նախահիմքը, որ հրաշակերտվել է Գրիգոր Նարեկացու գրչի տակ: Որո՞նումները ցույց են տալիս, որ այստեղ գործ ունենք աստվածաշնչային և առասպելական սայլի գաղափարի հետ»<sup>14</sup>: Ամբողջ խնդիրը, սակայն, այն է, որ տաղի սայլը, գաղափարով, ծագումնաբանությամբ աղերսներ ունենալով աստվածաշնչյան սայլի հետ, բոլորովին այլ խորհուրդ ունի: Այստեղ հարկավոր է կատարել մեկ պարզաբանում, առանց որի հետագա մեկնությունը կլինի անհնար: Աստծո արարչագործությունն ավարտվեց վեց օրում, իսկ յոթերորդ օրը Աստված հանգստացավ. «Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զամենայն զգործս իւր զոր արար, և հանգեաւ յաւուրն և թնեւրորդի յամենայն գործոց իւրոց զոր արար: Եւ օրինեաց Աստուած զօրն և թներորդ և սրբեաց զնա, զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց զոր սկսաւ առնել Աստուած» (Ծն., Բ, 2, 3):

Ըստ Աստվածաշունչ մատյանի՝ Ադամը ծնվել է Քրստոսից 4000 տարի առաջ, Աբրահամը՝ 2000 տարի առաջ: Աստված մարդկանց հետ կնքել է երկու ուխտ, որ կոչվում են հին և նոր. հին ուխտը կնքել է Աբրահամի հետ, նորը՝ իր Միածին որդուն ուղարկելով երկիր: Աստվածաշունչ մատյանի Հին և Նոր Կտակարանները երկու ուխտերի խորհուրդներն են: Հին ուխտը խարսխված է օրենքի, իսկ նոր ուխտը՝ սիրո վրա, որոնք մարդու՝

<sup>14</sup> Անդ.:

առ Աստված հոգևոր ընթացքի փուլերն են: Մարգարեների խոսքին հետամուտ հրեաները մարդու՝ առ Աստված միակ ճանապարհը համարում էին օրենքները, որոնք ամփոփված էին տապանակում, իսկ տապանակը պահպանվում էր Երուսաղեմում՝ Սողոմոնի տաճարում:

Հիսուս Քրիստոսը մարդկանց բերեց սիրո գաղափարը, քարոզեց սերը. «Լուարուք ապաքէն զի ասացաւ. սիրեսցես զընկերս քո, և ասեսցես զթշնամիս քո: Այլ ես ասեմ ձեզ. սիրեսցէք զթշնամիս ձեր» (Մատթ., Ե, 43, 44): Նա նաև ցույց տվեց միակ ժանապարհը. «Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհին՝ և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ հայր՝ եթէ ոչ ինս» (Յվհ., ԺԴ, 6) և ավետեց, որ ««Աստուած սէր է» (Ա Յվհ., Դ, 8): Սա էր հիմնական պատճառը, որ հրեաները Հիսուսին չընդունեցին և մեղադրեցին, թե նա ուզում է ոչնչացնել օրենքը, որին ի պատասխան՝ Հիսուսն ասաց. «Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ» (Մատթ., Ե, 17): Ասել է թե՛ նա եկել էր ոչ թե իր իսկ տված օրենքը ոչնչացնելու, այլ այն սիրո գաղափարով լրացնելու: Այսինքն՝ մարդկությունը մտել էր հոգևոր զարգացման նոր շրջան. օրենքի շրջանից անցնում էր սիրո շրջան, ուր օրենքը «լուծանելու» հարցն ինքսին կվերանար:

Մարդու հոգևոր զարգացման կամ ընթացքի երկու շրջանների հարցն ակնհայտ է, սակայն կա նաև առաջին շրջանը՝ Ադամից մինչև Նոյի մահը կամ Աբրահամի հետ Աստծո ուխտը: Այս շրջանում Աստված մարդկանց հետ ուխտ չէր կնքել, ընդամենը պատվիրել էր բարու և չարի գիտության ծառի պտուղը չուտել, ինչը Ադամն ու Եվան իրենց իսկ կամքով խախտեցին: Այս շրջանում չկար ո՛չ օրենքը (Հին կտակարանը), ո՛չ սերը (Նոր Կտակարանը): Աստծո խոսքը մարդուն դեռ չէր տրվել. մարդը գործում էր խղճի ստոր: Մարդկության հոգևոր կյանքի այս նախնական շրջանը կոչվում է խղճմտանքի շրջան, որն ընդգրկում է դարձյալ երկու հազարամյակ: Սիրո շրջանը (Նոր Կտակարանի) ևս ընդգրկում է երկու հազարամյակ: Արարչագործության վեց օրերի և յոթերորդ՝ հանգստյան օրվա ծածուկ խորհուրդն ընկալելու բանալին տալիս է Պետրոս առաքյալը. «Եւ այս ևս մի լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի մի օր Տեառն իբրև զհազար ամ է, և զհազար ամ իբրև զմի օր» (Բ Պետ., Գ, 8): Ուրեմն՝ խղճմտանքի, օրենքի և սիրո շրջաններից յուրաքանչյուրն ընդգրկում է երկուհազարամյա ժամանակահատված, այսինքն՝ վեց հազարամյակ (արարչագործության վեց օրերի խորհուրդը): Նույն խորհուրդն է պարունակում ավետարանական այն պատումը, ուր Հիսուսը Գալիլիայում հարսանիքի ժամանակ վեց թակույկ ջուրը վերածում է գինու, այսինքն՝ մարդու հոգևոր ընթացքն առ Աստված հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսով:

Տաղի մեկնիչներից Ա. Մուշեղյանը ձիշտ է նկատել, որ «Մասիսը խորհրդանշում է ջրիեղելից ջնջված մարդկային ցեղի վերածունդը»<sup>15</sup>, այսինքն՝ առաջին շրջանը կամ դրա ավարտը: Սակայն, ինչպես նշվեց, մենք գործ ունենք երեք շրջանի հետ: Սայլը խորհրդանշում է տապանակը՝ օրենքի շրջանը, իսկ Հիսուս Քրիստոսը՝ արարչագործության լրումը,

15 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» նոր մեկնությունը», «Քրիստոնյա Հայաստան», 2003, N 24 (164):

ԳԼԿԱՆԱԿԻՑՈՒԹՅՈՒՆ  
2 (ՃԲ) ԳՊՐԻԿ, ԹԻՎ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014  
ՎԷՆ համահայկական համալեն



այսինքն՝ Աստծո տաճարի ամբողջացումը՝ սիրո շրջանը: Խոսքը Սողոմոնի տաճարի մասին չէ, որը կործանման էր դատապարտված ի սկզբանե, քանզի դեռևս Դավիթն էր մարգարեացել, որ «Վէմն, զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան» (Մաղ., ԾԺԸ, 22): Այսինքն՝ երկրային այս տաճարը առանց անկյունաքարի էր և պետք է կործանվեր: Իսկ Եսայի մարգարեն մարդկանց հայտնում է Աստծո կամքը. «Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր, Ահաւասիկ ես դնեմ ի հիմունս Սիովնի վէմ բազմապատիկ զընտիր զգլուխ անկեան, զպատուականն ի հիմունս նորա. և որ հաւատասցէ ի նա՝ մի ամաչեսցէ» (Եսա., ԻԸ, 16): Հիսուս Քրիստոսն է տաճարի անկյունաքարը, և միայն նրանով այն կարող է լինել հաստատուն. «Ասէ ցնոսա Յիսուս չիցէ երբէք ընթերցեալ ձեր՝ ի գիրս. զվէմն՝ զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան. ի տեառնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր (Մատթ., ԻԱ, 42, նաև՝ Մրկ., ԺԲ, 10, Ղու., Ի, 17, Գործք, Գ, 11, Ա պետ., Բ, 7):

Տաղի սայլի վրա դրված է աթոռ, իսկ Հիսուս Քրիստոսի աջ և ձախ կողմերում քերովբեներ և սերովբեներ են: Հին Կտակարանում սայլով Աստծո տապանակի տեղափոխումը Կարիաթարին քաղաքից Երուսաղեմ նկարագրված է այսպես. «Եւ ժողովեաց միւս անգամ Դաւիթ զամենայն երիտասարդս յԻսրայելէ իբրև կթանասուն հազար: Եւ յարեաւ զնաց և ամենայն ժողովուրդ նորա ընդ նմա յիշխանացն Յուդայ ի զառիվերն ընդ որ ել տապանակն Աստուծոյ, յորոյ վերայ կոչեցաւ անուն Տեառն Աստուծոյ զօրութեանց, որ նստի ի քերովբէս ի վերայ նորա: Եւ եհան եղ զտապանակն Տեառն ի վերա սայլի նորոյ: Եւ առ զնա ի տանէ Աբինադաբայ բլրացոյ. և Ոզա և եղբարք նորա որդիք Աբինադաբայ՝ վարէին զսայլն հանդերձ տապանական, և եղբարք նորա երթային առաջի տապանակին: Եւ Դաւիթ և որդիքն Իսրայելի խաղային առաջի Տեառն տաւոթք և նուագարանօք զօրութեամբ, և երգովք և քնարօք և սրնգօք և թմբկօք և ծնծղայիւք և փողովք» (Բ Թգ., Զ. 1-5):

Ա. Մնացականյանը, սակայն, նկատելով խորհրդանշանների իմաստային զուգորդությունները, մեր կարծիքով հանգում է անհամոզիչ բացատրության. նա համոզված է, որ Գր. Նարեկացու սայլն «ընդօրինակված» է և «ոչ թե իրական, երկրային սայլ է, այլ գերբնական, աստվածաշնչային՝ բարձրված երկրորդ օրենքի վերացական սրբություններով»<sup>16</sup>:

Ա. Մուշեղյանն արդարացիորեն հակադրվում է Ա. Մնացականյանի այս տեսակետին, սակայն իր հերթին դարձյալ հանգում է անհամոզիչ եզրակացության. «Տաղի ամբողջ իմաստը հանգեցնելով սոսկ սայլի նկարագրությանը և ընդգծելով արտաքին մի երկու նմանություն՝ մեկնաբանը զարմանալիորեն անտեսել է մինչև իսկ ակնհայտ էականը՝ այն, որ Հին Կտակարանի սայլը փոխադրում է Հին Ուխտի տապանակը, իսկ Նարեկացու պատկերած սայլը՝ Աստծո Որդուն՝ Քրիստոսին, Ով բերում է հարություն և հավիտենական կյանք»<sup>17</sup>:

Մեր համոզմամբ Մասիս սարը, սայլը և Հիսուս Քրիստոսը խորհր-

16 Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 42:

17 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի» նոր մեկնությունը, «Քրիստոնյա Հայաստան», 2003, N 23 (163):

դանշում են արարչագործության (մարդու հոգևոր զարգացման ընթացքի ու կատարելության) միասնականությունը և մարդու հոգևոր հարությունը (Տիրոջ եկեղեցու հաստատումը երկրի վրա և երկնքում), որն առանց Քրիստոսի հարության անհնար էր: Այլ կերպ՝ դա արարչագործության ամբողջացումն է, հոգևոր տաճարի ամփոփումը: Հայտնության գրքում Հովհաննես առաքյալը նկարագրում է այն. «Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, և երևեցաւ տապանակն Աստուծոյ ի տաճարն իւր» (Յայտ. ԺԱ, 19): Այսինքն՝ Աստծո տապանակն իր տաճարից անբաժանելի է:

Տաղի խորհրդաբանության բացահայտման համար կարևոր է նաև Հայտնության գրքի այն պատկերը, որի շնորհիվ բացահայտվում է նաև աթոռի խորհուրդը. «Եւ ժամանեալ յիս հոգի: Եւ տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս: Եւ ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ականց, յասպոյ և սարդիոնի» (Յայտ. Դ, 2): Աստծո երկնային տաճարի երկրային նշանակ Սողոմոնի տաճարում, ուր պահվում էր տապանակը, դրված էր նաև դատավորի աթոռը, որի վրա նստած՝ Սողոմոն արքան վարում էր դատերը: Սողոմոնը Հին կտակարանում Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կերպարներից մեկն է, իսկ նրա անունը՝ Տիրոջ անուններից մեկը (Սողոմոն թարգմ. խաղաղություն):

Քերովբեների և սերովբեների մասին ասելու առանձին բան չկա, քանզի նրանք մշտապես Տիրոջ կողքին են: Մեկնիչներից շատերի համար հատկապես խնդրահարույց են հարյուր բարդ խոլորձի, վեց բարդ կորնգանի և մեկ բարդ «խրձաղիզեալ» մանուշակի խորհուրդները: Այս հարցում, բացի բույսերից, առանձնահատուկ կարևորություն ունեն թվերը, որոնք, որպես խորհրդանշաններ, հատկապես մեծ տեղ ունեն Գր. Նարեկացու «Մատյանում» և միջնադարյան լուծմունքից սկսած՝ միշտ եղել են մեկնիչների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Նարեկի միջնադարյան լուծմունքին նվիրված բարձրաթեք աշխատության մեջ Պ. Խաչատրյանը գրում է. «Նարեկացու գեղարվեստական մտածողության համակարգում խորհրդանշային ամենացայտուն տարրը թերևս թվերն են՝ նրանց տրված այլաբանական իմաստներով ու խորհրդավոր կիրառմամբ»<sup>18</sup>:

Իսկ Ա. Մուշեղյանի այն տեսակետը, թե «Յարութեան տաղի» մեկնիչի պարզամտությունը երևում է հատկապես նրանից, երբ վեց բարդ կորնգանը նույնացնում է «Աստծո վեցօրյա գործերի»<sup>19</sup>, այսինքն՝ վեցօրյա արարչագործության հետ՝ հենվելով միայն վեց թվի վրա», ուղղակի անընդունելի է, քանզի նա փաստորեն անտեսում է խորհրդանշանի հիմքը կազմող թիվը՝ վեցը: Այս առումով ուշագրավ է Պ. Խաչատրյանի տեսակետը. «Դրանք (իմա՝ թվերը) միջնադարյան մտավորական մարդու համար որքան բնական ու հասկանալի, նույնքան էլ նոր ժամանակների մտածողությանը թվում են խորթ ու սխալաստիկ: Մակայն մանավանդ այդ բնագավառում է, որ մեկնիչներն օգնում են ի հայտ բերելու Նարեկացու երկի որոշ թաքուն շերտեր»<sup>20</sup>:

18 Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 346:

19 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի» նոր մեկնությունը, «Քրիստոնյա Հայաստան», 2003, N 23 (163):

20 Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 352:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Զ (ԺԲ) ԳՄՐԻ, ԹԻՎ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014  
ՎԷՆ հասանալիական համդես

Գր. Նարեկացին որևէ պատահական պատկեր, բառ կամ թիվ չի գործածել. նա վերին աստիճանի բժախնդիր է, ինչը եթե որևէ մեկի համար նկատելի չէ տաղերի մեջ, ապա պարզ կերպով դրսևորվում է «Երգ երգոցի» մեկնության մեջ: Նա քաջատեղյակ է բոլոր խորհրդանշանների ներքին իմաստներին, որոնք մեկնաբանում է ամենայն պատասխանատվությամբ: Այսպես՝ նա հույժ կարևոր է համարում նաև թվերի խորհուրդները. «Ի համարս թուոց տասնն է կատարեալ, և եթէ այլ թուէ, ի մին դառնայ, ասել՝ մետասան. և որ ի կարգին է. նա և աստուածաբան վկայէ այսմ: Արդ որպէս ի միական, նոյնպէս և ի տասնեական տասն տասն հարիւր է. և հինգ տասն յիսուն. **Հարիւր կատարեալ թիւ է որպէս գտասն** (ընդգծումը մերն է- Հ.Ա.), և յիսուն կէս թիւ որպէս զհինգն: Արդ զկէս աչս ունի մարդ, և ոչ կատարեալ: Այսինքն յըսնաւորք: Արդ զիմրդ կարէ տեսնել զծածկեալն ի տեսլենէ, այսինքն յըսնավորէս: Նաև ի հարիւրաւորացն, այսինքն ի հրեշտակաց անտեսանելի է. թէպէտ և ոչ որպէս մեզ, այլ և ոչ կատարեալ»<sup>21</sup>: Այստեղ էական է նաև Գր. Նարեկացու այն միտքը, որ մարդը (հիսնավորը) կատարյալ չէ և չի կարող տեսնել իրենից ծածկվածը, երբ անգամ հարյուրավորների՝ հրեշտակների (կատարյալների) համար է այն անտեսանելի, թեև ոչ մեզ պես: Գր. Նարեկացին առանց երկիմաստության ասում է, որ հարյուր թիվը կատարալ է ձիշտ այնպես, ինչպես մեկը՝ միավորների, տասը՝ տասնավորների մեջ:

Երգ երգոցի մեկնության մեջ Գր. Նարեկացին մեկնում է հիշատակված բոլոր ծաղիկների և բույսերի խորհուրդները (շուշան՝ նարդոս, քրքում, եղեգ, կինամոն, մայրի, նոնենի և այլն), նաև՝ ծաղիկն ընդհանրապես. «Այսու զգեղեցկութիւն գարնանն նշանակէ, որ Քրիստոսիւ եղև ի ձմերայնոյն հալածմանն. և ծաղիկ, զարդարոց բազմութիւն առաքիւնութեանք և աստուածապաշտութեան ծաղկոցովք կոչէ»<sup>22</sup>: Սակայն խոլորձը, կորնզանն ու մանուշակն ընդհանրապես չեն հիշատակվում Աստվածաշնչում:

Միջնադարի մեկնիչները ձիշտ են նկատել, որ վեց բարդ կորնզանը խորհրդանշում է արարչագործության վեց օրերը.

### **Եւ այն վեց բարդ կորնզանն՝ Վեցօրեայ գործքն Աստուծոյ...**

Գր. Նարեկացին (և, ընդհանրապես, բոլոր մեկնիչները) որևէ առարկայի կամ երևույթի խորհուրդը մեկնելիս հենվում են դրանց բնորոշ, հիմնական հատկանիշի (հատկանիշների) վրա: Կորնզանի նման հատկանիշը մեղրատու լինելն է. «**Կորնզան**, Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող մանր, հոտավետ և կարմիր ծաղիկներով մեղրաբեր բույս»<sup>23</sup>, «Կոչւում է նաև մեղրածուծ»<sup>24</sup>: Մեղրի հոգևոր խորհուրդը Նարեկացին մեկնում է հետևյալ կերպ. «Մեղր՝ զքաղցր և զախորժակ վարդապետու-

21 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 279:

22 Աղ., էջ 293:

23 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, հատոր 3, էջ 198:

24 Ստ. Մալխասեան, Հայերէն բացատրական բառարան, հատոր 2, էջ 478:

թինս կոչէ, որ ի մերձատրից և ի հարսնացելոց Քրիստոսի ջամբին ի մարդիկ և քաղցրանան ի սիրտս լսողաց ըստ Դաւթի, թէ «Քաղցր են ի քինս իմ բանք քո քան զմեղր»: Թողում ասել որ մարգարէին քաղցրացալ յուտելն՝ որ յառաջ քան զուտելն դառն է ի բերանն, և քաղցր ի կլանելն: Վասն զի դառն է ի սկսմանն առաքինութիւն, և՛ յետոյ քաղցր»<sup>25</sup>: Այսինքն՝ մեղրը Քրիստոսի վարդապետությունն է, որ քարոզում են նրա հետևորդները: Ուշագրաւ է, որ Նարեկացին իր մեկնությունը հիմնավորելու համար վկայություններ է բերում Հին (Սղմ., ՃԺԸ, 103) և Նոր (Յայտ., Ժ, 9) Կտակարաններից:

Խոլորձը հոգևոր տաղերում ընդհանրապես չի գործածվել. սա միակ դեպքն է, ուստի այս դեպքում էլ պետք է հենվել հիմնական հատկանիշների վրա: Ստ. Մալխասյանի բացատրական բառարանում այն նկարագրվում է այսպես. «**Խոլորձ**, Ձուատակների կարգին պատկանող խտտելէն բոյս, որ ունի թանձր ու լայն տերևներ, ձեռնածև բաժանուած գնդարմատներ և **մութ ծիրանեգոյն կարմիր** ծաղիկներ (ընդգծումը մերն է- Հ.Ա.)»<sup>26</sup>: Այն հայտնի է նաև որպես գեղեցկագոյն ծաղիկներից մեկը, եթե ոչ ամենագեղեցիկը. «Խոլորձի՝ օրխիդեայի ծաղիկը նման է նրբաձաշակ արվեստի գործի: Նա այնքան գեղեցիկ է, որ մի քանի երկրներ այն դարձրել են ազգային խորհրդանիշեր, օրինակ՝ Վենեսուելան, Հոնկոնգը»<sup>27</sup>:

Մեկ հատկանիշով՝ բացառիկ գեղեցկությամբ, խոլորձը ներդաշնակ է կատարյալ թվի՝ հարյուրի հետ, երկրորդ հատկանիշը՝ «մութ ծիրանեգոյն կարմիր», հանրահայտ խորհուրդ ունի. Հովհաննէս Օձնեցին գոյնների մեկնության մեջ անդրադառնում է ծիրանագոյնին. «Կապուտական գերկնաւորն եցոյց առաքինութիւն և կարմրովն մանուածոյ՝ զանապական արեանն կցորդութիւն, որով հաւասարեաց մեզ արեան և մարմնոյ: Եւ բեհեզովն սպիտակաւ զԱստուածութեանն ընդ բնութիւնս մեր խառնումն, և ծիրանեան՝ զծածկեալ խորհուրդ անձառելի տնօրէնութեան»<sup>28</sup>: Այստեղ պարզ է դառնում նաև հարյուր թվի կատարյալ լինելու խորհուրդը, քանզի այն ծիրանագոյն խոլորձի հետ խորհրդանշում է «անձառելի տնօրնութեան» ծածկյալ խորհուրդը: Նաև հասկանալի է դառնում, թե ինչու է այն (հարյուրը) «ծածկեալ» մարդուց («յըսնավորէս»):

Գր. Նարեկացին «Երգ երգոցի» մեկնության մեջ ծիրանագոյնի (արքայական ծիրանու) մասին գրում է. «... ծիրանիք թագաւորաց վայելչականք են սեպիականութեամբ որ միայն նմա է իշխանութիւն զարդարեալ ծիրանօք...»<sup>29</sup>: Օձնեցու և Նարեկացու մեկնությունները հաստատում և որոշ նրբերանգներով ամբողջացնում է Շնորհալին. «...գոյնն ծիրանի զամենակալ թագաւորութիւն ցուցանէ՝ անսպառ և անվախձան»<sup>30</sup>:

Ըստ ավանդական մեկնության՝ հարյուր բարդ խոլորձանը խորհրդա-

25 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 307-308:

26 Ստ. Մալխասեան, Հայերէն բացատրական բառարան, հատոր 2, էջ 279:

27 <http://www.dasaran.am/apps/wiki/view/id/7248>

28 Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 160-161:

29 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 344:

30 Մեկնութիւնք խորանաց, Հետազոտութիւն և բնագրեր, աշխատասիրութեամբ՝ Վ. Հ. Ղազարեանի, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2004, էջ 276:

ԳՐԱԿԱՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ  
2 (ԺԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈԼՈՐԴՆԵՐ-ՊԵՂԵՑԿԱԳՈՅՆ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ  
ՎԷՆ ԽԱՄԱՆԻՍԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

նշում է մարգարեներին.

**Եւ այն հարիւր բարդ խոլորձանն՝  
Այն նահապետքն են՝ մարգարէք...**

Ա. Մուշեղյանն առաջարկում է նոր մեկնություն. նա կարծում է, որ «... հարյուր բարդ խոլորձան (խոլորձներ) հավաքական անունով Նարեկացին նկատի ունի օծման յուղ՝ մյուռոն եփելու բազմազան անուշաբույր ծաղիկները, որ Քրիստոս բերում է Մասիսի լանջերից, բոլոր ազգերի Սուրբ Մկրտության համար, քանի որ առանց մյուռոնով դրոշմվելու ոչ ոք չի կարող արժանանալ Քրիստոսի հարության շնորհին»<sup>31</sup>: Այս տեսակետը ոչ մի հիմնավորում չունի, քանզի Նարեկացուն քաջ հայտնի էին մյուռոնի համար անհրաժեշտ ծաղիկները. Տերը մեկ առ մեկ թվարկում է դրանց անունները Մովսեսին. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. և դու ան քեզ խունկս անուշունս, ծաղիկ ընտիր գմռնենաց հինգ հարիւր սիկղ, և կինամոնն գանոյշ գկէս այնորիկ՝ երկերիւր և յիսուն, և գխունկեղէգն գանոյշ՝ երկերիւր և յիսուն, և հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն, և ևղ ի ձիթենեաց հիմենաւ միով: Եւ արասցես զայն ևղ յօծումն սրբութեան, ևղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց, ևղ յօծումն սրբութեան լինիցի» (Ելք Լ 22–25): Ինչպէս տեսնում ենք, խոլորձը չի հիշատակվում. այս դեպքում առավել ևս անհասկանալի է մնում, թե ինչու այն պետք է լինէր հարյուր բարդ: Ի դեպ՝ Ա. Մուշեղյանը, զուգահեռ անցկացնելով խոլորձի հետ, նման չհիմնավորված մեկնություն է առաջարկում նաև կորնզանի համար. «Վեց բարդ կորնկանը» դարձյալ նմանատիպ խորհուրդ պետք է ունենա և չի կարող կապվել **Աստծո վեցօրյա գործերի հետ**, ինչպէս վերծանում է հետագա մեկնիչը»<sup>32</sup>:

Հարյուր թվի կատարյալ լինելու ակունքները Աստվածաշնչում են: Հիսուս Քրիստոսը երկրի վրա ապրեց երեսուներեք տարի և չորս ամիս: Արդեն նշվեց, որ մարդկության հոգևոր զարգացման երեք շրջաններից յուրաքանչյուրը, ըստ Աստվածաշնչի, բաղկացած է երկու հազար տարուց (Աստծո արարչագործության վեց օրերը): Այն, որ Հիսուս Քրիստոսը չէր եկել միայն վերջին՝ սիրո (Ավետարանի) շրջանի համար, վկայում է ինքը. հրեաները մեղադրում են Հիսուսին ստախտության մեջ. «Ասեն ցնա Հրեայքն. յիսուն ամ չև ևս է քո, և զԱբրահամ տեսեր: Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեն ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու են ես» (Յվհ., Ը, 57, 58): Այսինքն՝ Աբրահամից՝ հին ուխտից առաջ և բոլոր ժամանակներում է ինքը: Ուրեմն՝ նրա երկրային կյանքի տարիները պետք է երրորդել, և կատարյալ ուղիղ հարյուր տարի. այսինքն՝ Աստծո ամենակալ ու անվախձան թագավորությունը, որը կատարյալ է, բայց մարդկանց՝ հիմնավորների համար անհասկանալի: Ուշագրավ է, որ հրեաները Քրիստոսի տարիքը սահմանելիս գործածում են հիսուն թիվը, այսինքն՝ նրա մեջ տեսնում են միայն մարդուն (հիմնավորին) և ոչ թե Աստծուն (հարյուրա-

31 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի» նոր մեկնությունը, «Քրիստոնյա Հայաստան», 2003, N 23 (163):

32 Անդ.:

վորին՝ կատարյալը):

Հարյուր թիվը նաև այլ խորհուրդի նշանակ է. Աբրահամի հետ ուխտ կնքելիս Աստված նրան խոստանում է զավակ, ով ծնվում է այն ժամանակ, երբ լրանում է Աբրահամի հարյուր տարին («Եւ Աբրահամ հարիւրամեան էր յորժամ եղև նմա Իսահակ որդի իւր», Ծն., ԻԱ, 5): Հին կտակարանում Հիսուս Քրիստոսի զոհաբերությունն ու հարությունը ներկայացնող տիպարը Իսահակն է<sup>33</sup> (թարգմանվում է խնդություն). Աստված Աբրահամի հավատն ստուգելու համար պատվիրում է զոհաբերել Իսահակին և միայն վերջին պահին է կասեցնում նրան՝ մատնացույց անելով զոհաբերության գառը (Գառն Աստծո), որը նույնպես Հիսուս Քրիստոսին էր խորհրդանշում: Այլ կերպ՝ Աստծո հավատավոր ժողովուրդների նախահայրը՝ հայր Աբրահամը (թարգմանվում է հայր բազմաց), հարյուր տարեկանում ունեցավ Իսահակին, այսինքն՝ Աստծո սահմանած տարիքում, որը կատարյալ է:

Մեկ բարդ «խրճադիզեալ» մանուշակների խորհուրդն ավանդաբար ընկալվել է այնպես, ինչպես մեկնվում է տաղի ավելացված հատվածում.

**Եւ այն մին մանուշակ՝  
Միաուրեալ Երրորդութիւնն...**

Եթե ընդունում ենք, որ վեց բարդ կորնգանը խորհրդանշում է վեցօրյա արարչագործությունը, ուրեմն Նարեկացին չէր կարող կիսատ թողնել պատկերի խորհրդական իմաստը, այսինքն՝ չանդրադառնալ յոթերորդ՝ հանգստյան օրվան. ինչպես շաբաթն ամբողջական չէ աշխատանքային վեց օրերով՝ առանց հանգստյան օրվա, այնպես էլ ամբողջական չէ արարչագործությունն առանց Աստծո հանգստյան օրվա, որը ազդարարում էր արարչագործության լրումը:

Մանուշակը, խլորճն ու կորնգանը, որպես խորհրդաբանական խոսքի նշանակներ, որևէ մեկի կողմից չեն մեկնվել. դրանք չեն հանդիպում ոչ միայն Աստվածաշնչում, այլ նաև խորանների մեկնություններում կամ մեկնաբանական այլ աշխատություններում: Մրանք հեղինակի ստեղծած խորհրդանշաններն են, ուստի նրա կողմից էլ իմաստաբանվել են: Ավելին՝ մանուշակը, բացի այս դեպքից, հանդիպում է Նարեկացու ընդամենը մեկ տաղում, այն էլ մեկ անգամ՝ այլ ծաղիկների շարքում.

Փունջ սաւսին **սաղարթ** ստեղնաշիտակ տնկոցն,  
Խոռն **հազրէվարդին** մանուշակաբեր բիւրին,  
Բիւր սիրողայնոց ածէր, **գոյն ծիածանին** խառնեալ...<sup>34</sup>

Այս խորհրդանշանը հետագայում հոգևոր տաղերում ըստ էության տեղ չի գտել, չի հաստատվել: Ներսես Շնորհալին նույնպես այն գործածել է ընդամենը երկու անգամ, իսկ Գանձարանի տաղային միավորներ-

33 Համարաբարտ Աստուածաշունչ մատենի, աշխատասիրեց Վեր. Վահագն Գ. Սահակեան, Տպարան «Ատլաս», Պէյրոս, 1963, էջ 1142-1173:  
34 Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Եր., 1981, էջ 85:

րում հանդիպում է երեք անգամ.

**Երևեալ ծաղիկ գարնայնոյ,  
Վարդ, մանիշակ, քրքում, շուշան վայելուչ...<sup>35</sup>:**

**Նոր դրախտին քո, Տէր, գոր տնկեցէր յերկրի,  
Վարդ անուշահոտ և մանիշակ քրքրում  
Առեալք ընծայենք քեզ, թագաւոր փառաց  
Գերապայծառ ըզվարս աստուծայնոց արանց<sup>36</sup>:**

**Ո՛վ շուշան ծաղիկ, վարդ մանուշակ հոտով ի լի:  
Դու ի տաճարին առեր գրեհեզն և զծիրանին,  
Դու Սելովմայ խաւսիր ընդդէմ Գաբրիելա<sup>37</sup>:**

**Գարնանաշարժ յարութեամբ, որոտընդոստ արթնութեամբ,  
Ծով իւր ալեքըն ցընծայ կարկաջահոս վտակաւք:  
Այսար ի լեռոն Սիովն նարդոս ըզհոտ իւր ցընդեալ,  
Վարդ վառ երփից գոյն յորդան և ծիրանին մանիշակ<sup>38</sup>:**

**Դու անթառամ ծաղիկ ես, փունջ մանուշակ հոտով ես,  
Վարդի գոլւնոյն նման ես, մեղան, Աստուածածնին<sup>39</sup>:**

Տաճարի և այրոռների մասին խոսելիս Հայտնության գրքից կատարեցինք մասնակի մեջբերում, որն ամբողջական տեսքով նպաստում է նաև յոթերորդ օրվա («Մին մանուշակ փնջադիզեալ») խորհուրդի բացահայտմանը. «Եւ տեսի **աթոռս**, և նստան ի վերայ սոցա. և դատաւորութիւն տուաւ նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեան Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և գորս ոչն երկիր պագին գագանին, և ոչ առին զդրոշմ նորա ի ձակատս իւրեանց. և ոչ ի վերայ աջոյ ձեռին իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ: Եւ յետ այտորիկ ի մեռելոց ոչ ոք եկեաց, մինչև ի կատարել հազար ամին. այս է յարութիւն առաջին: Երանի սրբոցն, որք ունին բաժին ի յարութեանն առաջնում. ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին քահանայք Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի. և թագաւորեացեն ընդ նմա հազար ամ» (Յայտ. Ի, 4-6): Վեց հազարամյակում (արարչագործության՝ հոգևոր ընթացքի վեց օրերում) գագանին չերկրպագածները (Տիրոջ ձանապարհով ընթացածները) Տիրոջ հետ պետք է թագավորեն հազար տարի: Նրանք շատ են, բայց նույն թագավորության մեջ են, որի խորհուրդն էլ ամփոփում է «Մին մանուշակ փնջադիզեալ» նախադասությունը, իսկ թագավորության հազար տարին խորհրդանշում է տիրոջ

35 **Ներսես Շնորհալի**, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ **Արմինե Քոչկերյանի**, Եր., 1987, էջ 21:

36 Անդ., էջ 225:

37 Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Գանձարան, Գիրք Ա, էջ 169:

38 Անդ., էջ 586:

39 Անդ., ԺԳ հատոր, էջ 1158:

հանգստյան օրը:

Տաղի մեկնիչներից միայն Ա. Մուշեղյանն է ձիշտ հասկացել մանուշակի խորհուրդը, սակայն քանի որ տաղի խորհրդաբանությունն ամբողջությամբ չի պատկերացրել, այն մնում է մեկուսի: Նշելով, որ գարնան գուշակ մանուշակը «...վաղ ժամանակներից թե՛ հայ ժողովրդական բանահյուսության մեջ և թե՛ մատենագրական երկերում ընդունված է եղել իբրև հարությունը խորհրդանշող ծաղիկ», բերում է մի քանի վկայություններ, որոնց թվում՝ նաև Գրիգոր Լուսավորիչի Վարդապետությունից, որտեղ «...հեղինակը, հարության գաղափարը ժողովրդին բացատրելու համար, պատկերում է գարնանային բնության զարթոնքը, երբ սկսում են բողբոջել ծաղիկները, որոնց թվում և՛ «հօրոտն և մօրոտն և մանիշակն»: Ապացուցելու համար, որ Գր. Նարեկացին լավ գիտեր այս մասին, հիշատակում է նաև նրա «Ի յարութիւնն Ղազարոսու» տաղը, որում մանուշակը դարձյալ գործածված է Ղազարոսի հարության առիթով<sup>40</sup>:

Անկասկած է, որ մանուշակի ամենաբնորոշ հատկանիշը հոգևոր իմաստով մահը խորհրդանշող ձմռանից հետո գարնան՝ բնության հարության ավետումն է, և ձիշտ է Ա. Մուշեղյանը, երբ եզրակացնում է. «Յարութեան տաղում» մանուշակը խորհրդանշում է հարության գաղափարը և քանի որ խորհրդանշում է ինքնազոհությունը (խրճադիզեալ) է սայլին, կնշանակի հարություն է բերում բազում մարդկանց»<sup>41</sup>: Հայտնության գրքից բերված վերևի մեջբերման մեջ հենց այդ բազում մարդկանց մասին է խոսվում («Երանի սրբոցն, որք ունին բաժին ի յարութեանն առաջնում»):

Սայլի նկարագրության մեջ տեղ գտած բեհեզի խորհրդը պարզվում է Օձնեցու վերոնշյալ մեկնությամբ. «Եւ բեհեզովն սպիտակաւ զԱստուածութեանն ընդ բնութիւնս մեր խառնումն», իսկ մետաքսը համարվում է ազնվագույն կերպաս. Երուսաղեմի՝ Տիրոջ քաղաքի նկարագրության մեջ ասվում է. «Եւ զարդարեցար ի զարդ ոսկոյ և արծաթոյ: Եւ հանդերձ քո բեհեզ և զառնաուխտ (մետաքս) և ճաճանչանաուխտ» (Եզ., ԺԶ, 13):

Արծաթի և ոսկու խորհուրդներն ակնհայտ են. դրանք Աստծո խոսքի նշանակներից են: Սաղմոսերգուն ասում է, որ Տիրոջ կողմից ոսկով և արծաթով բուժվածների ցեղերի մեջ հիվանդներ չկային. «Եհան գնոսա ոսկով և արծաթով, և ոչ գոյր յազգի նոցա հիւանդ» (Սաղ., ԾԵ, 37): Ակնհայտ է, որ նկատի ունի Աստծո խոսքը, քանզի «Իմ է արծաթ և իմ է ոսկի, ասէ Տէր ամէնակալ» (Անգ., Բ, 8):

Սայլը՝ որպես արարչագործության ամբողջացման՝ հոգևոր տաճարի ամփոփում, նաև կառույցի նյութով պետք է համապատասխանի Տիրոջ երկրային և երկնային տաճարին: Հասկանալի է, որ այդ կառույցի նյութը Աստծո խոսքն է՝ Սուրբ գիրքը, որի նշանակը ոսկին է. «Եւ դրուագեաց Սողոմոն զտունն ի ներքուստ ոսկով զըտով. և հաստատեաց ոսկի բևեռօք հանդէպ դարբիրայն՝ և պատեաց զնա ոսկով» (Գ.Թգ., Զ, 21): Ոսկին, բնականաբար, նաև երկնային տաճարի կառույցի նյութն է. «Եւ դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիւ. և ՚ի դառնալն իմում տեսի կթն ճրագ-

40 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի» նոր մեկնությունը, «Քրիստոնյա Հայաստան», 2003, N (23 (163):  
41 Անդ:



արան ոսկի: Եւ ի մէջ կթն ճրագարանացն նման որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմութեան պճնաւոր, և գօտևորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն (Յյտ., Ա, 12,13): «Եւ քահանայք շուրջ զաթոռովն՝ նմանք տեսեան զըմբըխտի. և շուրջ զաթոռովն՝ աթոռք քսան և չորք, և ի վերայ աթոռոցն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս» (Յյտ., Դ, 4)

Սայլի խորհրդական պատկերն ամբողջացնում են «սաթ ու սպիտակ» եզները.

**Եթէ եզինք են սաթ ու սպիտակ,  
Ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,  
Եղջերն ամէն խաչանման,  
Եւ մագն ամէն՝ հոյլ մարգարիտ.  
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,  
Եւ ահա չխաղայր անին այն:**

Հետազոտողները հիմնականում եզներին որևէ խորհուրդ չեն վերագրում: Ա. Մուշեղյանը ըմբռնել է, որ նրանք խորհրդանշաններ են, սակայն ճիշտ բացատրություն չի գտել. «...սայլին լծված սաթ և սպիտակ զույգ եզներն էլ խորհրդանշում են գիշերն ու ցերեկը»<sup>42</sup>: Եզները «սաթ ու սպիտակ են, մագերը՝ «հոյլ մարգարիտ», եղջուրները՝ խաչանման: Նրանց ճակատները զարդարված են ծաղկանշաններով, այսինքն՝ բերում են հոգևոր զարթոնքի խորհուրդը: Այդ զարթոնքի խորհուրդն ամփոփում են Սուրբ գրքի՝ հոգևոր տաճարի (որն այլ կերպ սայլն է՝ իր ամբողջական նկարագրով) զույգ կտակարանները. «սաթ» եզը խորհրդանշում է Հին, իսկ «սպիտակ» եզը՝ Նոր կտակարանը, այսինքն՝ Աստծո խոսքն է տաճարի (սայլի) շարժիչ ուժը: Թեև պատկերը կարծես տարրնթերցության տեղիք չի տալիս, բայց Նարեկացին երկու այլ խորհրդանշանով ավելի է շեշտում խորհրդական իմաստը. «Եւ մագն ամէն՝ հոյլ մարգարիտ», «Եղջերն ամէն խաչանման»: Մարգարիտը Տիրոջ խոսքի նշանակներից մէկն է. Քրիստոսը պատվիրում է աշակերտներին. «Մի տայք զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ» (Մատթ., Է, 6): Առարկայորեն խաչանման եղջուրներ պատկերացնելն անհնար է, բայց երբ զույգ եզներն ընդունում ենք որպէս զույգ կտակարանների խորհրդանշաններ, ամեն ինչ հստակ է դառնում. Տիրոջ ամենատարածված առարկայական նշանակը խաչն է, որը Աստվածաշնչի գաղափարական առանցքն է:

Տարակարծությունների տեղիք է տվել նաև ճորտի կերպարը, ով ավանդական մեկնության մեջ նույնացվել է Հովհաննես Մկրտիչի, իսկ նոր մեկնիչների կողմից՝ հայ գեղջուկ սայլորդի հետ: Հայոց լեզվի ամենահեղինակավոր բառարաններում չկա նույնիսկ չնչին ակնարկ այն մասին, որ ճորտ բառը նշանակում է գեղջուկ, շինական, ռամիկ կամ գյուղացի (գյուղաբնակ): Հայկազեան բառարանում այն բացատրվում է որ-

42 Անդ., N 24(164):

պէս «սպասաւոր, փոքրաւոր, պաշտօնեայ, արքանեակ»<sup>43</sup>, Հր. Աճառյանը տալիս է նույն բացատրությունը՝ հավելելով մեկ կարևոր տեղեկություն. «...արդի գրականում նշանակում է «իշխանին կամ հողատիրոջ հպատակ հարկատու»<sup>44</sup>: Ուրեմն՝ ակնհայտ է, որ Գր. Նարեկացին նկատի է ունեցել ոչ թե հայ շինականի, այլ սպասավորի: Այստեղ ծագում է այլ հարց. պատկերն առարկայորեն ընկալելիս դժվար է, եթե ոչ անհնար, բացատրել սպասավորի (փոքրավորի, պաշտոնյայի, արքանյակի) արտաքին նկարագիրը.

**Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,  
Ուռամիջակ, հաստաբազուկ,  
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ...**

Դժվար է պատկերացնել, որ մեծն Նարեկացին չզանազաներ ծանր գեղջկական աշխատանք կատարող շինականին իր պատկերած դյուցազնական ճորտից: Դարձյալ առարկայորեն մտածելիս այս նկարագիրը հարիր չէ նաև ճորտին՝ սպասավորին: Ուրեմն ինչ սպասավորի մասին է խոսքը: Վերհիշենք, թե ովքեր էին գնում տապանակը տեղափոխող սայլի առջևից. «Եւ Դաւիթ և որդիքն Իսրայելի խաղային առաջի Տեառն տաւղօք և նուագարանօք զօրութեամբ, և երգովք և քնարօք և սրնգօք և թմբկօք և ծնծղայիւք և փողովք» (Բ Թգ., Զ, 4, 5):

Սայլի առջևից գնացողը Իսրայելի հզոր արքա Դավիթն է՝ Տիրոջ սպասավորը, ում զորության («Այլ դու տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ» (Սաղ., Գ, 4)) և գեղեցկության («Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ» (Սաղ., ԺԵ, 6)) անվախճան աղբյուրը Տիրոջ հանդէպ տաճած նրա սերն ու հավատն են: Տաղի ճորտը Աստծո տաճարի, ասել է թե՛ Աստծո սպասավորն է, և նրա զորության և գեղեցկության աղբյուրն էլ, բնականաբար, նույնն է՝ հավատը. «Բայց աւետեացն Աստուածոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուածոյ» (Հռ., Գ, 20): Եւ ինչպես որ Դավիթն ու հավատավոր իսրայելցիներն էին նվագարանների մեղեդիներով «զորութեամբ» ուղեկցում սայլին, այնպես էլ ճորտն է իր ահեղ ձայնով տեղից շարժում սայլը և ուղեկցում նրան:

**Նա ձայն ածէր եզնամուլին,  
Կանչին առնէր աթոռակին.  
Դարձեալ խաղայր եզնամուլըն,  
Խաղայր, ցնծայ աթոռակըն...**

Խորհրդաբանական իմաստի բացահայտման համար այս պատկերը սկզբունքային նշանակություն ունի. առարկայորեն մտածելու դեպքում եթե եզներին դիմելը հասկանալի է, ապա անբացատրելի է մնում, թե

43 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան: Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, հտ. 2, էջ 186:

44 Հրաչեայ Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Եր., Երևանի համալս. կրատ., 1962, հատոր 3, էջ 213:

սայլը տեղից շարժելու համար ձորտն ինչու՞ է դիմում աթոռակին: Աթոռը, ինչպես նշեցինք վերևում, Հիսուս Քրիստոսի իշխանության, նույն է թե՛ նրա անվախճան քահանայապետության նշանակն է, իսկ եզները՝ տիրոջ խոսքի նշանակները: Այսինքն՝ Աստծո տաճարը գործում է միայն այն ժամանակ («Դարձեալ խաղայր եզնամուլըն, Խաղայր, ցնծայ աթոռակըն»), երբ ունի հավատավոր սպասավոր, և այդ սպասավորը դիմում է նրան: Այդ մասին Հիսուս Քրիստոսն աշակերտներին ասում է շատ պարզ ու հստակ կերպով. «Խնդրեցէք և դացի ձեզ, հայցեցէք և գտցիք. բախեցէք և բացցի ձեզ, զի ամենայն որ խնդրէ՝ առնու. և որ հայցէ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա» (Մատթ., է,7,8): Այսինքն՝ Աստծո խոսքը տրվում է նրան, ով դիմում է Աստծուն:

Սայլը շարժվում է դեպի Երուսաղեմ, ուր նրան դիմավորում են նոր Սիոնի որդիները: Այստեղ առանցքային նշանակություն ունի «նոր Սիովնը»:

**Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ,  
 Ի Մասեաց յաջ կողմանէն  
 Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ.  
 Եւ ձորնչալով գայր, մտանէր յԵրուսաղէմ.  
 Եւ որդիք նոր Սիովնի ելին ընդառաջ,  
 Որք երգէին զերգս ասելով.  
 –Փա՛նրք Քրիստոսի ամենագօր յարութեան,  
 Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ  
 Եւ վերստին նորոգմամբ  
 Յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:  
 Փա՛նրք Քրիստոսի ամենագօր յարութեան:**

Սայլը գնում է Երուսաղեմ, ուր նրան դիմավորում են նոր Սիոնի որդիները. Սիոնն ու Երուսաղեմը հաճախ նույնացվում են՝ որպես նույն խորհուրդի նշանակներ. «Սիօն» և «Դուստր Սիօնի» գործածուած են երբեմն ցուցանելու համար բոլոր քաղաքը, մանաւանդ Մօրիա լեռը և տաճարը, և երբեմն, այլաբանութեամբ, ճշմարիտ եկեղեցին երկրի վրայ և յերկինս»<sup>45</sup>: Սակայն պետք է հստակ զանազանել հին և նոր և Սիոնների (նույն է թե՛ հին և նոր Երուսաղեմների) խորհուրդները. հին Սիոնը տիրոջ երկրային եկեղեցու խորհուրդն է արտահայտում, նորը՝ երկնային: Հայտնության գրքում այդ զանազանությունը հստակ նշվում է. «Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր. քանզի առաջինն երկինք և երկիր էանց. և ծով ո՛չ գոյր: Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յԱստուծոյ և յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ առն իւրոյ» (Յայտ., ԻԱ, 1,2): Այս տարբերությունն անտեսելու հետևանքով մեկնությունների մեջ թույլ են տրվել սկզբունքային անձտություններ, թե Հիսուս Քրիստոսը գնում է Երուսաղեմ՝ խաչվելու. «Խաչանման եղջյուրներով, մարգարտակուռ եզները (Ավետարանի ավանակի փոխարեն) ոսկեղեն գահին բազմած Արքայորդուն, իմա՝ Քրիստոսին, շքեղազարդ սայլով

45 «Բառարան Սուրբ Գրոց», Կոստանդնուպոլիս, Տպագրութիւն Ա., Յակոբ Պոյաձեան, 1881, էջ 508:

տանում են Երուսաղեմ՝ խաչելության»<sup>46</sup>: Հարց է առաջանում՝ եթե Տերը դեռ չէր խաչվել և հարություն առել, նոր Սիոնի որդիները ինչու՞ էին փառաբանում Տիրոջ հարությունը, կամ նախնյաց կապանքներից ինչպես էին ազատվել և «վերստին նորոգմամբ» հավիտենական կյանքի ժառանգորդ դարձել, եթե այդ ամենը հնարավոր էր միայն Տիրոջ խաչելությունից և հարությունից հետո, ինչը հաստատում է Սուրբ գիրքը: Ավելին՝ տաղի հետևյալ տողերը պարզորոշ ասում են, որ խաչելությունն ու հարությունն արդեն կատարված իրողություններ էին.

**Առաջի նորա՝ մանկունք գեղեցիկ,  
Ի գիրկս նոցա՝ խաչն տէրունական...**

Տիրոջ երկրային կյանքի ժամանակ տերունական խաչի մասին խոսք լինել չէր կարող. այն, որպես Հիսուս Քրիստոսի նշանակ, իմաստավորվել է առավել ուշ ժամանակներում:

Վերջին պատկերը տալիս է տաղի խորհրդական բովանդակության հիմնական հարցի պատասխանը. այն իրոք նվիրված է Հիսուս Քրիստոսի հարությանը, և արդյոք Նարեկացին է այդպես վերնագրել («Տաղ Յարութեան»), իսկ եթե իրոք այդպես է, ապա ինչու՞ Նարեկացին այն, իր մյուս հարության տաղերի նման, չի գետեղել Գանձատետրում, տաղը հարության կանոնի մեջ չեն ներառել նաև հաջորդները: Եւ պատահական չէ, որ միջնադարյան մեկնիչներից մինչև ժամանակակից հետազոտողները վերնագրի հարցում ունեցել են տարակարծություններ: Ձեռագրերում այն հանդիպում է տարբեր վերնագրերով կամ անխորագիր<sup>47</sup>: Եթե անգամ Նարեկացու գրչին է պատկանում «Տաղ Յարութեան» վերնագիրը, այն բոլորովին էլ Հիսուս Քրիստոսի հարությանը չի վերաբերում. սա է հիմնական պատճառը, որ Նարեկացին այն չի գետեղել Գանձարանում: Այդ դեպքում ինչու՞ է փառաբանվում Հիսուս Քրիստոսի հարությունը: Հարցի պատասխանը գտնվում է Հայտնության գրքի այն հատվածում, որը այժմոսների և մանուշակի խորհրդանշանների մեկնության առիթով հղեցինք: Մեկ անգամ ևս անդրադառնանք այդ հատվածին, քանզի տաղի հղացման բուն գաղափարն այդտեղ է գտնվում. «Եւ տեսի այժոռս, և նստան ի վերայ նոցա. և դատաւորութիւն տուաւ նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեան Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և զորս ոչն երկիր պագին գագանին, և ոչ առին զդրոշմ նորա ի ճակատս իւրեանց. և ոչ ի վերայ աջոյ ձեռին իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ: Եւ յետ այսորիկ ի մեռելոց ոչ ոք եկեաց, մինչև ի կատարել հազար ամին. **այս է յարութիւն առաջին**: Երանի սրբոցն, որք ունին բաժին **ի յարութեանն առաջնում** (ընդգծումը մերն է–Հ.Ա.). ի

46 Ա. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի» նոր մեկնությունը, «Քրիստոնեայ Հայաստան», 2003, N 24 (164):

47 Մայլի տաղ է, ի Գրիգորէ Նարեկացոյ սասցեալ (ձեռ. N 2079), Տաղ անոյշ և գեղեցիկ՝ տեսեան մարգարէին (ձեռ. N 3498), Տաղ Յարութեան (ձեռ. N 7694), Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն սասցեալ (ձեռ. N 4466), Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն է (ձեռ. N 5066), Սուրբ Էջմիածնա տաղ այսպէս ասվի (ձեռ. N 7672), Տաղ ի վերայ չորեքերպեան այժոռոյն Մասեանց (ձեռ. N 3263): Մի քանի ձեռագրերում էլ հանդիպում է անխորագիր:

վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին քահանայք Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի. և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ» (Յայտ. Ի, 4-6):

Նոր Սիոնի որդիները փառաբանում են Հիսուս Քրիստոսի հարությունը, որովհետև առանց նրա հարության հնարավոր չէր արդարների (նոր Սիոնի որդիների) հարությունն ու հավիտենական կյանքը տիրոջ արքայությունում, որն էլ, ինչպես տեսնում ենք, կոչվում է **«յարութիւն առաջին»**: Այսպիսով՝ Գր. Նարեկացու տաղը նվիրված է սրբերի (հավատավորների) այս առաջին հարությանը, այդ պատճառով էլ տեղ չի գտել Գանձարանում:

**Հայկագուն Ս. Ավրցյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականության, հատկապես հոգևոր տաղի աստվածաբանության, խորհրդական խոսքի նշանական համակարգի մեկնության, հոգևոր խորհրդանշանի տեսության խնդիրները: Հեղինակ է այս հարցերին առնչվող բազմաթիվ հոդվածների: Զբաղվել է նաև 20-րդ դարի վերջին քառորդի հայ բանաստեղծության բանարվեստի խնդիրներով, հրատարակել մի շարք հոդվածներ:

## Summary

### INTERPRETATION OF CANTO OF GR. NAREKATSI ENTITLED «RESURRECTION»

Haykazun. S. Alvrtsyan

The canto “Resurrection” (begins with the line “The cart was going down the mountain Masis”) by Gregory of Narek is his only writing that he did not include in Gandzatetr, later it was not included in Gandzaran (Treasury) too. The question arises – why? The answer to the question is important because the resolution of this issue is going to contribute to the interpretation of the content expressed with help of some spiritual allegory. Many linguists, literary scholars and translators have tried to interpret this canto, but there is still no single, final and complete interpretation, which would respond to all the answers. Taking into account the previous interpretations, the author tried to reinterpret and answer to the above question by analyzing this sample of exceptionally reasonable speech (covenant) basing upon spiritual interpretation, and especially upon the system of interpretation of Gregory of Narek.

**ТОЛКОВАНИЕ ПЕСНИ ГР. НАРЕКАЦИ “ВОСКРЕСЕНИЕ”**

Айказун. С. Алврдян

Песнь “Воскресение” (начинается строкой “Тот воз спускался с горы Масис”) Григора Нарекаци является его единственным произведением, которое он не включил в Гандзатетр, в последствии оно не было включено и в Гандзаран (Сокровищница). Возникает вопрос – почему? Ответ на вопрос важен потому, что разрешение данного вопроса способствует интерпретации содержания выраженного при помощи духовной аллегии. Многие филологи, литературоведы и переводчики пытались интерпретировать данную песнь, но до сих пор нет единого, окончательного и полного толкования, которое бы дало ответы на все вопросы. Автор, принимая во внимание предыдущие толкования, попробовал по новому интерпретировать и ответить на поставленный выше вопрос, анализируя данный исключительный образец рассудительной речи (завета) в основном базируясь на святописные интерпретации, и особенно на систему толкования Григора Нарекаци.

Հ (ԺԲ) րարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

ՎԷՎ հասկանալիության հասնելու